



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Լճափ համայնք, Ազատամարտիկների 27

ՔԱՂՎԱԾՔ

13.02.2014թ թիվ 1 նիստի N4-Ա որոշման

ՀՈՂԱՍԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28.1 կետով, «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանանչելու մասին» ՀՀ կառավարության 2011թ-ի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ-ի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2014թ-ի փետրվարի 10-ի N 12/14 դրական եզրակացությունը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հիմք ընդունելով «Իրան—Հայաստան 400կվ լարման էլեկտրահաղորդման օղային գծի` ՀՀ տարածքով անցնող հատվածի ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2008թ-ի նոյեմբերի 20-ի թիվ 1334-Ն որոշման պահանջները՝ Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,0879 հա այլ հողատեսքերի նպատակային նշանակության փոփոխումը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի՝ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի (հենասյունների) կառուցման և սպասարկման համար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լճափ համայնքի ղեկավար՝

Հ.Սիմոնյան

Իսկականի հետ ճիշտ է
Քարտուղար՝

Ս.Եփրեմյան

